ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«01» նոյեմբեր 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-109/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 18.10.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1.«Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 18.10.2016թ. բողոքով հայտնել է, որ 22.09.2016թ. ՀՀ Շիրակի մարզի Լուսակերտի համայնքապետարանը «ՀՀ Շիրակի մարզի

«Լուսակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի պատուհանների և դռների փոխման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հրապարակել է «ԼՀ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հայտարարություն:

Ընկերությունը 03.10.2016թ. ներկայացրել է Ընթացակարգին մասնակցելու հայտ: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.10.2016թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հայտեր են ներկայացրել երկու մասնակից՝ «Արդ Պրոգրես» ՍՊԸ և «Շինստար» ՍՊԸ կոնսորցիումը և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.10.2016թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի ամաձայն՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.10.2016թ. նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է մերժել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հայտը՝ համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի պահանջների:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.10.2016թ. հայտարարություն է հրապարակել «Արդ Պրոգրես» ՍՊԸ և «Շինստար» ՍՊԸ կոնսորցիումի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին:

Ընկերությունը, որպես բողոքի իրավական հիմք, վկայակոչել է Կարգի 45-րդ կետը, որի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերլուծելով վերոհիշյալ նորմը՝ Ընկերությունը նշել է, որ եթե մասնակցի հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա գնահատող հանձնաժողովը մերժում է տվյալ մասնակցի դիմումը:

Ընկերությունը բողոքի մեջ վկայակոչել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը, 31-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը, Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետը:

Մասնավորապես Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետը սահմանում է, որ հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.10.2016թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետում ընդամենը նշվել է, որ Ընկերության ներկայացրած հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին

(չներկայացնելով համապատասխան հիմնավորումը), մինչդեռ, ըստ Ընկերության, գնահատող հանձնաժողովը պարտավոր էր որոշման մեջ հստակ հիմնավորել, թե «Վահրադյան-Շին» ՍՊԸ-ի հայտի ապահովումը ինչ մասով չի համապատասխանում հրավերի պահանջներին, ինչպես նաև պարտավոր էր մատնանշել, թե հրավերի հատկապես որ պահանջին չի համապատասխանում վերոհիշյալ հայտը: Սակայն, ըստ Ընկերության, գնահատող հանձնաժողովն իր որոշման մեջ չի անդրադարձել վերոհիշյալ հարցերին և չի տվել դրանց պատասխանները: Իսկ այդպիսի որոշումը Ընկերությունը չի համարում հիմնավորված և միանշանակ հակասում է իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջներին:

Ըստ Ընկերության՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, կայացնելով չհիմնավորված և ապօրինի որոշում, խախտել է Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետը:

Ընկերությունը բողոքում նշել է, որ ավելի ցածր գնային առաջարկ ներկայացրած «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ապօրինի որոշում կայացնելու արդյունքում, զրկվել է Ընթացակարգի ընտրած մասնակից ճանաչվելու հնարավորությունից:

Վերլուծելով վերոգրյալ նորմը՝ Ընկերությունը գտնում է, որ դրա արդյունքում խախտվել են ինչպես մրցույթի անցկացման կարգը, այնպես էլ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի իրավունքները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է.

1. Որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամակավոր միջոց և կասեցնել «ԼՀ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից օրենքի խախտմամբ կայացված որոշմամբ Պատվիրատուի և «Արդ Պրոգրես» ՍՊԸ և «Շինստար» ՍՊԸ կոնսորցիումի միջև պայմանագրի կնքման հետ կապված որևէ գործողության իրականացումը, այդ թվում նաև պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը, որը բավարարվել է ԳԲԽ-109/16 բողոքը քննող հանձնաժողովի 24.10.2016թ. միջանկյալ որոշմամբ:

2. «ԼՀ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման ընթացքում թույլ տրված խախտումների հետևանքով անվավեր ճանաչել 03.10.2016թ. «ԼՀ-ՊԸԱՇՁԲ-16/1»

ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին, 2-րդ և 4-րդ կետերը:

3. «ԼՀ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման ընթացքում թույլ տրված խախտումների հետևանքով անվավեր ճանաչել 14.10.2016թ. «ԼՀ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետը:

4. «ԼՀ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին:

Ի լրումն բողոքի՝ Ընկերությունը 02.11.2016թ. Կենտրոնին ներկայացրել է տեղեկանք, համաձայն որի 01.09.2016թ.-ից սկսած «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հաշվապահությունն իրականացվել է «Բել-Նար» ՍՊԸ-ի կողմից՝ վերջինիս և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 01.09.2016թ. կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հիման վրա (կից ներկայացվել է), ինչպես նաև «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի կողմից 31.10.2016թ. տրված տեղեկանքը, առ այն, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն վերոհիշյալ բանկում ունի ընթացիկ հաշիվ և նշված հաշվի գծով 1-ին կարգի ստորագրողներն են Մայիս Վահրադյանը և Տիգրան Վահրադյանը, և վերջիններիս յուրաքանչյուրի ստորագրությունը բավարար է հաշվեհամարով գործարքներ կատարելու համար:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-109/16 բողոքը քննող հանձնաժողովի 24.10.2016թ. ժամը 16:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, որոնք պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

<u>2. ՀՀ Շիրակի մարզի Լուսակերտի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Շիրակի մարզի Լուսակերտի համայնքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 25.10.2016թ. գրությամբ ներկայացրել է Ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ ՀՀ Շիրակի մարզի «Լուսակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի պատուհանների փոխման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն:

Հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է Ընկերության հայտով ներկայացված փաստաթղթերը և հայտաբերել թերություններ և անհամապատասխանություն, մասնավորապես հայտի թիվ 7 հավելվածում՝ տուժանքի մասին համաձայնության մեջ, բացակայել է Ընկերության գլխավոր հաշվապահի ստորագրությունը:

Պատվիրատուն վկայակոչել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Պատվիրատուն վկայակոչել է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասը, որով սահմանվում է, որ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով, ինչպես նաև «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, հետևաբար ըստ Պատվիրատուի, հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնության մեջ «գլխ. Հաշվապահի ստորագրություն» նորմի կիրառումը պարտադիր է: Նշված դաշտը պետք է ստորագրված լիներ կամ գլխավոր հաշվապահի կամ հաշվապահին փոխարինողի կամ հաշվապահի պաշտոնատար անձի կողմից կամ հիմնավորվեր վերը նշված նորմի կատարման անհնարինությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետի պահանջները՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-109/16 բողոքը քննող հանձնաժողովի 24.10.2016թ. ժամը 16:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, որը պնդել է գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲԽ-109/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-109/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ Շիրակի մարզի Լուսակերտի համայնքապետարանի կարիքների համար «Լուսակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի պատուհանների և դռների փոխման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԼՀ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 6-րդ կետի 6.1 ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից:

Հայտի ապահովումը ներկայացվում է Մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որի նախագիծը ներկայացված է նույն հրավերի N 9 հավելվածով:

3. Ընթացակարգի հրավերի N 9 հավելվածը ներկայացվել է հետևյալ տեսքով.

Հավելված 9
<<ԼՀ-ՊԸԱՇՁԲ-16/1>> ծածկագրով*
պարզեցված ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N
(մասնակցության հայտի ապահովում)

գ. Լուսակերտ <<_____>>_____
20 թ.

<<Ընկերության անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է <<ՀՀ Շիրակի մարզի Լուսակերտի համայնքապետարան>>-ի* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <<ՀՀ Շիրակի մարզի <<Լուսակերտի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի պատուհանների և դռների փոխման>>* ձեռքբերման << ԼՀ-ՊԸԱՇՁԲ-16/1>>* ծածկագրով պարզեցված** գնման ընթացակարգին:

1.2 Որպես մասնակցության հայտի ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային

գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները («Գնումների մասին» ՀՀ օրենքի 29 հոդվածի 2-րդ մաս) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Բանկի կողմից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև գնման ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագրի ուժի մեջ մտնելը կամ գնման ընթացակարգում հաղթող չճանաչվելը կամ գնման ընթացակարգը չկայացված հայտարարելը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը՝
Հասցեն՝
Սպասարկող բանկի անվանումը,
Հ/Հ
ՀՎՀՀ
տնօրեն՝ ----------
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ ----------
(ստորագրություն)
Կ.Տ

** Նախապես լրացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:*
*** Պատվիրատուի կողմից նախապես հրավերով լրացվում է գնման ընթացակարգը*

4.«Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից հայտին կից ներկայացվել է հայտի ապահովում՝ տուժանքի համաձայնության տեսքով, ***որը ստորագրվել է միայն Ընկերության տնօրենի կողմից և կնքվել:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.10.2016թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրության՝

1) 1-ին կետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված և ներկայացված են հրավերով սահմանված կարգով: Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում Հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են և կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բացառությամբ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

2) 2-րդ կետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետի պահանջները, որոշել է մերժել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հայտը:

3) 4-րդ կետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Արդ Պրոգրես» ՍՊԸ և «Շինստար» ՍՊԸ (կոնսորցիում)-ին:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.10.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ Ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչել «Արդ Պրոգրես» ՍՊԸ և «Շինստար» ՍՊԸ (կոնսորցիում)-ին:

7. ՀՀ ֆինանսների նախարարությունը 25.07.2014թ. թիվ 06/73-1/10432 գրությամբ հայտնել է, որ եթե մանակցի կողմից ներկայացված հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնության մեջ բացակայում են համապատասխան անձանց ստորագրությունները և մասնակցի կնիքը, ապա հայտն օրենքով սահմանված կարգով ենթակա է մերժման:

5. ԳԲԽ-109/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 19.10.2016թ. բողոքը, ՀՀ Շիրակի մարզի Լուսակերտի համայնքապետարանի գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված հայտի ապահովումը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում:

Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հրամանով հաստատվել են գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը, մասնավորապես հրամանով հաստատված է հրավերով սահմանված կարգով գնման

գործընթացի մասնակցի կողմից ներկայացվող հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնության օրինակելի ձևը, համաձայն որի նշված համաձայնությունը ենթակա է ստորագրման մասնակցի տնօրենի, գլխավոր հաշվապահի կողմից և պետք է հաստատվի մասնակցի կնիքով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 25.07.2014թ. թիվ 06/73-1/10432 գրությամբ հայտնել է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով, ինպես նաև «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, հետևաբար, եթե մանակցի կողմից ներկայացված հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնության մեջ բացակայում են համապատասխան անձանց ստորագրությունները և մասնակցի կնիքը, ապա հայտն օրենքով սահմանված կարգով ենթակա է մերժման:

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն, մասնակցելով ՀՀ Շիրակի մարզի Լուսակերտի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ԼՀ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգին, հայտի թիվ 9 հավելվածով ներկայացրել է հայտի ապահովում՝ տուժանքի մասին համաձայնության տեսքով, որը ստորագրվել էր Ընկերության տնօրենի կողմից և հաստատվել կնիքով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, արձանագրելով անհամապատասխանություն Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման և հրավերի պահանջների միջև, ինչպես նաև հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը, որը հայտում առկա անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն չի տալիս այն դեպքերում, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, 07.10.2016թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով որոշել է մերժել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հայտը:

Այսպես Կարգի 45-րդ կետը սահմանում է, որ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***<u>բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի</u>***

ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մինչդեռ Կենտրոնը արձանագրում է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովումը ըստ էության չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին, քանի որ հրավերով սահմանվել է, որ հայտի ապահովում՝ տուժանքի մասին համաձայնությունը պետք է ստորագրվի մասնակցի տնօրենի, գլխավոր հաշվապահի կողմից և պետք է կնքվի, մինչդեռ Ընկերության կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնությունը ստորագրվել է միայն մասնակցի կողմից և կնքվել: Հետևաբար, ղեկավարվելով Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, որի համաձայն՝ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ՝ մերժելով Ընկերության հայտը:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, 07.10.2016թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին և 2-րդ կետերում հստակ նշել է, որ Ընկերության կողմից ներկայացրած հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ուստի հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետի պահանջները Ընկերության հայտը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ նման պայմաններում Պատվիրատուն, մերժելով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հայտը, գործել է իրավաչափ:

Այսպիսով՝ Կենտրոնը գտնում է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, ուստի Խորհրդին առաջարկում ենք Ընկերության կողմից 18.10.2016թ. ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-109/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան